ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ Գ.ՇԱՀԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԹԳՀԳ

Առարկա

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՆ՝ ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՅԱՆՑ ԵՎ ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

7-րդ ԴԱՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Մ/մ _____ Շ.Առաքելյան

Փոխտնօրեն՝ _____ Ա.Ավչյան

Տնօրեն՝ _____ Է.Նիկողոսյան

Հաշվետվություն

Նախագիծը նպատակ ունի VII դասարանի սովորողներին

Ներկայացնել՝ Համացանցի առավելությունները և թերությունները, թվային միջավայրում կիբերանվտանգության կարևորությունը

Ձևավորել՝ Աշակերտի մոտ տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու կարողություններ, ճանաչողական, կարծիք հայտնելու, փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողություններ

Նախագծի կարողունակ մոտեցումը կազմակերպվել է այնպես, որ սովորողների մոտ

Նախագծային աշխատանքների յուրացումը առարկայական չափորոշիչներով սահմանված զարգացնում են երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը,հաղորդակցման հմտությունները, մարզում են հիշողությունը:

Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստում են սովորողների համեմատելու, վերլուծելու, կարծիք հայտնելու, փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու և արժևորելու և այլ կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև օգնում են կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի արդի իրողությունների ու կյանքի միջև:

Նախագծի վերջնարդյունքներով սովորողը պետք է կարողանա՝

1 .Ամրապնդել գիտելիքները և դրանք կիրառել նպատակային ուղղություններով
2. Զարգացնել բանավոր խոսքը
3. Հետևել ապահով համացանցից օգտվելու անվտանգության կանոններին
4. Ջույգերով կամ թիմերով ուսումնասիրի և վերլուծի զանազան աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցային հմտություն:

Կատարված աշխատանքի նկարագիր.Նախագծային աշխատանքը կազմակերպվել է «Ապահով համացանց և կիբերանվտանգություն » խորագրով՝ուսումնական նախագծի պլանի և կազմված թեմատիկ պլանավորման հիման վրա: Կազմվել է աշակերտների հետ արտադասարանային հանդիպումների հաճախումների և կատարած աշխատանքների բնութագրող ու բովանդակող մատյան : Հանդիպումների ժամանակ .

Աշակերտների հետ քննարկման արդյունքում

1/իրականացվել է ինֆորմացիայի հավաքագրում, մշակում, խմբավորում

2/ընտրվել է այնպիսի հիմնախնդիր կամ ձևակերպել այնպիսի հիմնահարց,

Բացահայտել համացանցի առավելությունները և թերությունները ,կիբերանվտանգության կանխարգելման գործընթացները

3/ սահմանվել են այնպիսի ուղղություններ,

Հարցազրույցի անցկացում , տեսանյութի պատրաստում, սահիկաշար, բուկլետ,պաստառ

4/ հստակեցվել է նախագծային աշխատանքի ներկայացման ժամանակահատվածը, որը,կախված ուսուցչի դրված նպատակից , նպատակահարմար է իրականացնել մեկ դասաժամում (45-90 րոպե),

5/ աշակերտների հետ հստակեցվել է նախագծային աշխատանքի ներկայացման կառուցվածքը և ձևաչափը,

Սահիկաշարի տեսքով

6/ սովորողների միջև հետազոտական աշխատանքի բաժանում,ըստ որի՝ հետազոտական աշխատանքը տրոհել ենք բաժինների և , ըստ սովորողների ցանկության, ընտրել ենք թեմաները, որոնք հետազոտելու և որոնցով զարգացնելու են իրենց հմտություններն ու կարողունակությունները, ընտրվել է հետազոտության անցկացման ձևաչափերը, կատարվել է աշխատանքի բաժանում, նախագծային աշխատանքի ներկայացման մեթոդներ և ձևաչափերի ընտրություն,

7/ կատարվել է սկզբնաղբյուրների ընտրություն, աղբյուրների տրամադրում և անհրաժեշտ նյութերի քննարկում .

1. Համացանց
2. Անհրաժեշտ գրականություն
3. Խորհրդատվություն

8/ ստուգվել են հավաքագրված նյութերը:Ստուգվել են թղթային և էլեկտրոնային տարբերակով ներկայացված նյութերը, աշխատանքային պատկերները, նկարները,կատարվել են սղագրումներ , սխալների ուղղում, քննարկում:

9/ Սահմանվել են միավորային և ձևավորող գնահատման չափանիշներ :

Անհատական և խմբային գնահատում(ռուբրիկներ, ինքնագնահատման թեստեր)

10/ Կազմակերպվել է նախաներկայացում ,որի ժամանակ՝

- սովորողներին տրամադրվել է տեսասահիկի կազմման տեխնիկական աջակցության,

- սովորողների միջև կատարվել է տեսանյութի պատրաստման և ներկայացման ընտրություն, աշխատանքի ներկայացման խոսքի և կեցվածքի նախնական ստուգում,

11/ Կազմակերպվել է նախագծի պաշտպանություն,այսինքն՝ հիմնական ներկայացման փուլում սովորողները վերջնականացրեցին նախագծային աշխատանքի վերաբերյալ իրենց խոսքը և ներկայացրեցին այն: Կարևոր է, որ սովորողներն իրենց ներկայացման ժամանակ ազատ էին զգում, կարողանում էին տարբեր ուղղություններով վերլուծել և ըստ անհրաժեշտության՝ մեկնաբանել այն: Քննարկումը իրականացվեց անկաշկանդ մթնոլորտում, սովորողների արտահայտվելու ընթացքում ուսուցիչը և դասընկերները անհարկի չմիջամտեցին; Պաշտպանությանը,ուսուցիչը և դիտորդները, ըստ ուսուցչի կազմած չափանիշների , հետևում էին ներկայացման ընթացքին և կատարում համապատասխան նշումներ:Քննարկումը իրականացվել է անկաշկանդ մթնոլորտում.սովորողների արտահայտվելու ընթացքում ուսուցիչը, դասընկերները և մյուս ներկաները ուշադիր հետևում էին նախագծի պաշտպանությանը:

12/ապահովվել է անդրադարձի փուլ, այսինքն՝նախագծի ներկայացման ավարտին իրականացվել է ամփոփում, որն ի կատար է ածվել տարբեր ձևերով.

-զույգային կամ փոքր ենթախմբերով աշխատանք

-տեսանյութ դիտելու

13/ իրականացվել է գնահատում, որը կազմակերպվել է աշակերտների և ուսուցչի հետ համատեղ:Գնահատման արդյունքում հաշվի են առվնել նաև մասնախմբի ներկա անդամների կարծիքները և տեսակետները:

1.Ռայա Ավետիսյան --- 9

2.Եղյան Նատալի -----8

3.Կուլիջանյան Էլեն---8

4.Ղազարյան Ժորա----7

5.Մանուկյան Էլեն-----8

6.Միլենա Մանուկյան --9

7.Մարգարյան Սուրեն --7

8.Էլինա Մելքոնյան-----9

9.Ֆաթիմա Քալաշյան---8

Այսպիսով՝ սույնով հաշվետվությամբ նկարագրվում են աշակերտների կողմից ձեռք բերված այն կարողունակություններն ու հմտությունները,որոնք վեր են լուծվել անդրադարձի փուլում: Նախագծային աշխատանքն օժանդակել է առարկայական չափորոշիչներով սահմանված «Նախագծային ուսուցում» ծրագրով «Ապահով համացանց և կիբերանվտանգություն» թեմայի բովանդակության համակարգված յուրացմանը, զարգացրել է երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտություններին և հիշողությանը: Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստել են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու, կարծիք հայտնելու , փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու և արժևորելու և այլ կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև օգնել են կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի և արդի իրողությունների ու իր կյանքի միջև:

Ուսումնական նախագծով նախատեսված վերջնարդյունքներից սովորողները արդյունքում կարողացան .

1. Ներկայացնել
   Համացանցի առավելությունները և թերությունները,ինչպես նաև դրական և բացասական կողմերը, կիբերանվտանգության կանխարգելման միջոցները

2. Գնահատել
   Իմ ուղղորդմամբ և երեխաների միահամուռ ուժերով կարողացանք ներկայացնել մեր կատարած աշխատանքը և ստանալ արդյունք

3. Նախագծային աշխատանքի ընթացքում աշակերտների մոտ ձևավորվեց .

--Սովորել սովորելու կարողունակություն

--Ինքնաճանաչման և սոցիալական կարողունակություն

--Թվային և մեդիա կարողունակություն

--Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Առաջարկում եմ

Առավել մեծ ուշադրություն դարձնել սովորողների խոսքի և բանավոր ներկայացման մշակույթին, քանզի նախագծային աշխատանքը ներկայացնելիս սովորողների մոտ նկատվում էր կապակցված խոսքի և մտքերի ոչ դյուրին արտահայտչականություն, ձայնային ավելորդ հնչյուններ, որոնք խանգարում էին բանավոր խոսքի հստակությանն ու կայունությանը:

Ուսուցիչ՝ Ն. Կիրակոսյան

Եզրակացություն

21-րդ դարում համացանցը ժամանակակից մարդու համար հոսանքի և ջրի պես կարևոր է:

Սոցիալական ցանցերը այնքան են գրավում, որ մարդիկ չեն զգում, թե ինչպես են «սպանում» ժամանակը, որը կարելի էր ավելի օգտակար ու հետաքրքիր տնօրինել: Սոցիալական ցանցում միշտ վտանգ կա հանդիպելու վնասակար տեղեկությունների, որոնք դրդում են թմրամիջոցներ օգտագործելու, ինքնասպանության :

Համացանցում դուք կարող եք հանդիպել տարբեր ծառայությունների, որոնք առաջարկում են կարճ համարին SMS հաղորդագրություն ուղարկել: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ դրամաշորթություն:

Ուստի պետք է զգոն լինել, չընդունել, չբացել կասկածելի հղումներ,որպեսզի չդառնաք խաբեության զոհ, և որի հետևանքով կարող եք նաև համակարգիչը վարակել վիրուսներով: Սոցիալական ցանցերում բավականաչափ սխալ տեղեկատվության առկայության պատճառով համացանցում անցկացրած ժամանակը մի քանի անգամ ավելանում է: Այս ամենը բացասաբար է անդրադառնում ինքնազգացողության, ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա: Համացանցը ոչ ապահով տիրույթ է, որպեսզի չդառնանք կիբերհանցագործների զոհը ,պետք է լինենք ավելի զգույշ և հետևենք կանոններին, որոնց մասին մենք խոսեցինք:

Իրական կյանքը և համացանցային կյանքը միմյանցից տարբերվում են , պետք է զգոն լինել և չվստահել ինչպես իրական կյանքում անծանոթներին , այնպես էլ համացանցում:

Նախագծային աշխատանքի արդյունքում եզրահանգեցինք այն գաղափարին, որ համացանցում և իրական կյանքում վտանգները գրեթե նույնն են, երկուսն էլ կարող են հանգեցնել վատ հետևանքների: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում ընտրել ապահով գաղտնաբառեր, չբացել անծանոթ հաղորդագրություններ և հղումներ, միացնել երկփուլային պաշտպանությունը:

Եղե՛ք միշտ տեղեկացված և հետևեք անվտանգության կանոններին: